



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Steve Frintner, President
Charlene Tabet, Vice President
Steve Ferguson, Clerk
Dr. Emily Weisberg
Dr. Armond Aghakhanian

Superintendent
Matt Hill, Ed.D.

ԲԴՄՇ-ի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ.

Սկսելով 2021 թվականը, դեռ հույսով և լավատեսությամբ սպասում ենք, որ այս տարին կլինի ավելի լավը, բայց առաջին 2 շաբաթները մեծ դժվարություն բերեցին: Մենք պետք է շարունակենք միասնաբար կերտել հզոր դպրոցական շրջան, քաղաք և հայրենիք:

Անցյալ շաբաթ, Միացյալ Նահանգների Կապիտոլիում տեղի ունեցած ահաբեկչական իրադարձությունները դեռ թարմ են մնացել մեզանից շատերի հիշողության մեջ: Ինչպես հանրապետական, այնպես էլ դեմոկրատական կուսակցությունների առաջնորդները նշել են, որ դեմոկրատիան մի համակարգ է, որտեղ մենք կարող ենք կատաղի բանավեճ անցկացնել և չհամաձայնվել քաղաքականության և օրենքների հետ, բայց մենք չենք կարող հանդուրժել ատելությունը, բռնությունը և անօրինականությունը:

Դպրոցների հոգեբանների ազգային ասոցիացիան մի շարք ռեսուրսներ է տրամադրել մեր ներկա վիճակի դեմոկրատիայի վերաբերյալ խոսակցություններն առաջնորդելու համար: Ինչպես նրանք նշում են, «2020 թվականի ընտրություններն ուժեղ կարծիքներ, հույզեր և տարաձայնություններ են առաջացրել բազմաթիվ ամերիկացիների շրջանում և դրանք տեղի են ունենում համատարած համաճարակի համատեքստում, համաճարակից ստացված շարունակական անհանգստության, տնտեսական դժվարությունների, ռասայական անարդարության և անկարգությունների ֆոնի վրա: Անկախ ընտրությունների արդյունքից, մենք շատ անելիքներ ունենք վերականգնվելու և առաջ ընթանալու համար: Որպես ծնող, խնամակալ և դաստիարակ, մենք կարևոր պատասխանատվություն ունենք օգնել երեխաներին և դեռահասներին իրենց անվտանգ զգալու համար և օգնել սովորել, թե ինչպես պետք է հանդուրժող և հարգալից կերպ շփվել տարբեր տեսակետ ունեցող անձանց հետ»: Մեղմել այս հղումները, որոնք ռեսուրսներ են տրամադրում [ծնողների](#) և [դաստիարակների համար](#):

Նորություններ պատվաստանյութի վերաբերյալ. Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակը (LADPH) կայքէջ է մշակել նվիրված [Լոս Անջելեսի գավառում Կորոնավիրուսի վարակի 2019 թվականի պատվաստանյութի բաշխման](#) վերաբերյալ, որը պատասխանում է ձեր ունեցած հարցերին և նորություններ է տրամադրում Կորոնավիրուսի պատվաստանյութի վերաբերյալ: Հիմնվելով [Կալիֆոռնիայի Կորոնավիրուսի պատվաստանյութի ծրագրի](#) ուղղորդումների վրա, կրթության բաժինն ընդգրկված է 1Բ փուլում: Լոս Անջելեսի հանրային առողջապահության գրասենյակը (ԼԱՀԱԳ) կսկսի 1Բ փուլի պատվաստանյութի բաշխումը փետրվար ամսին շրջանի աշխատակիցների համար (արտոնագրված և մյուս աշխատակիցների համար): Շուտով հավելյալ տեղեկություն կստանանք ԼԱՀԱԳ-ից:

«Կալիֆոռնիայի անվտանգ դպրոցներ բոլորի համար» ծրագիրը. Նահանգապետը թողարկել է [Կալիֆոռնիայի անվտանգ դպրոցներ բոլորի համար ծրագիրը](#) փետրվար ամսից սկսած արագացնել երեխաներին անվտանգ կերպով անձամբ դպրոց վերադարձնելու ծրագիրը, որը կսկսվի ամենափոքրիկներից (ԱՄ-2-րդ դասարան) և ամենաշատ կարիքավորներից: Չնայած բոլոր դպրոցներն իրավասու կլինեն դիմել որոշակի չափանիշների բավարարելով՝ միջոցներ ստանալու համար, բայց այդ դպրոցները պետք է գտնվեն այնպիսի գավառում, որտեղ յուրաքանչյուր 100, 000 բնակչի միայն 25-ը կվարվեն յոթ օրվա ընթացքում: Ներկայումս, Լոս Անջելեսի գավառի ճշգրտված դեպքերի թիվը հասնում է 77-ի: Ահա նոր կայքէջ [Կալիֆոռնիայի անվտանգ դպրոցներ բոլորի համար ծրագրի կենտրոնի](#) վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Բրբենքը և դպրոցական այլ շրջանները մտահոգություն են հայտնել մանրամասների և շտապ ժամանակացույցի կապակցությամբ, հատկապես Կորոնավիրուսի դեպքերի վերջին ալիքի սփռումից հետո: Մենք տեղեկություն կհատկացնենք ձեզ նահանգի կողմից նոր տեղեկություն ստանալու դեպքում:

Նորություններ նահանգային բյուջեի վերաբերյալ. Անցյալ շաբաթ նահանգապետ Նյուսոմը հրապարակեց [2021-22 նահանգային բյուջեի առաջարկը](#) օրենսդիր մարմինների համար: Չնայած մենք ողջունում ենք նահանգապետ Նյուսոմի դպրոցները վերաբացելու համար միանգամյա ֆինանսավորման տրամադրման և կյանքի արժեքի համեստ ճշգրտման (COLA) համար, մենք դեռ պետք է պայքարենք կրթության կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների համար: ԲԴՄԾ-ն ապագա պակասորդ է կանխատեսում արձանագրության նվազման, պետության կողմից պարտադրված կենսաթոշակների (CalSTRS/CalPERS) վճարումների

ավելացման և շարունակական բավարար եկամտի բացակայության պատճառով: Առանց շարունակական պայքարի, մենք ստիպված կլինենք կրճատել բյուջեն առաջիկա 2 տարիների ընթացքում:

Մարտին Լյութեր Քինգ կրտսերի օր. Շաբաթվա վերջին օրերին, տոնելով Մարտին Լյութեր Քինգ կրտսեր ծննդյան օրը, եկեք շարունակել հիշել նրա կյանքն ու գործունեությունը: Մենք պետք է հիշենք նաև, որ այս օրը դաշնային միակ տոնն է, որը նվիրված է խրախուսել ամերիկացիներին կամավոր աշխատել համայնքը բարելավելու համար: Ահա մի քանի ռեսուրսներ.

- Հասարակության համար կատարվող նախագծերի գաղափարներ. <https://americorps.gov/newsroom/events/mlk-day>
- Հանդուրժողականության ուսուցման ռեսուրսներ. <https://www.tolerance.org/magazine/the-best-of-our-dr-martin-luther-king-jr-resources>

Շարունակելով աշխատել միասին, մենք կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,
Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ